

77

Lux  
529

299



1

5  
2  
10

May  
529

~~299515~~

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՍՈՒՐԲ ՊԱՏԿԵՐՆԵՐ



## աշխատավորեց



979

2012

Տպարան Ա. Մ. Մահտեսի-Ցակորեանցի  
Տիպ-Լիտօգրաֆիա Ա. Մ. Մցցւսակովա.

1898

ՆԿԵՊԵՑՈՒՅՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ամեն մի եկեղեցում մենք կախած  
ունինք կրօնական կեանքից վերցրած գա-  
նազան սրբերի պատկերներ։ Այդ պատ-  
կերները մենք յարգում ենք, պատւում։  
Սրբերի Աստուծուն Հաճելի վարքը, արար-  
մունքները և քրիստոնէական հաւատի  
համար նահատակուիլը, կամ մարտիրոսա-  
կան մահը մեզ ստիպում են դորանց չը  
մոռանալ, յարգել և պատուել։ Այս ջեր-  
մեռանդ պատուասիրութիւնը, յարգանքը  
մի պատկառելի զգացմունքէ դեպի նորանց,  
ինչպէս առ հասարակ ժողովուրդը պատ-  
ւում է արժանաւոր մարդկանց։ Մեր Տէր

Дозволено цензурою. Тифлисъ, 4 июня 1898 года.



Խ 533

829 - 2009

(680 - 93)

Յիսուս-Քրիստոսը փարիսեցիներին նախա-  
տելով ասում է. «Ով որ սեղանով է երդ-  
ւում, երգւում է նորանով և այն ամեն  
բանով, որ նորա վերայ է և ոլ որ երդ-  
ւում է տաճարով, երդւում է նորանով և  
նորանում բնակւողով (Աստուծով) և ով  
որ երկնքովն է երդւում, երդւում է Աս-  
տուծոյ աթոռով և նորանով, որ նստում է  
նորա վերայ Մատթէոսի ԻՒ. 20, 21,  
22 և 23: Այստեղ հասկանալի է, որ սե-  
ղանով երդւողը՝ միևնոյն է, թէ երդւում է  
պատարագով, տաճարի անունով երդւողը՝  
երդւում է Աստուծոյ անունով և երկնքով  
երդւողը՝ երդւում է Աստուծոյ աթոռով:  
Սեղանը և պատարագը յարաբերութիւն  
ունին իրար հետ, եկեղեցին Աստուծոյ  
հետ և երկինքը Աստուծոյ աթոռուի հետ:  
Նշանակում է պատկերն էլ կապ ունի նորա  
հետ, որի սկզբնատարից նկարուած է և  
պատկերի առաջ երկրպագողը միևնոյն է

թէ երկրպագում է կտաւի վերայ նկա-  
րուած սրբին, մտքով վերանալով երկինք  
նորա սկզբնատարի առաջ: Կտաւի վերայ  
նկարուած պատկերը յարաբերութիւն և  
կցորդութիւն ունի իսկական այն անձնա-  
ւորութեան հետ, որից նկարուած է պատ-  
կերը և իւրաքանչիւր նորա պատւողը գրե-  
թէ պատւում է իսկականին: Քրիստոսի  
հաւատացեալ իւրաքանչիւր մարդ նայե-  
լով Տէրունական կամ այլ սրբոց պատկեր-  
ներին, իսկոյն և եթ մտքով վերափոխ-  
ւում է դէպի նորանց և մարդ երևակայիլով  
նորանց կրած տանջանքները, չարչարանք-  
ները և նահատակութիւնները, ապա երկ-  
նային յաւիտենական փառքի արժանի լի-  
նելը, սիրտը լցւում է բարի զգացմուն-  
քով, խիղճը կատարելապէս կենդանու-  
թիւն ստանում և Ս. գրքի խորհուրդ-  
ները մնում են կենդանի նորա համար:  
Ներկայումս ամեն մի տանից, առաւելա-

պէս ամեն մի դիւանատնից, կախուած է  
կայսեր պատկերը, ով որ ալդ պատկերին  
պատւում է, միւնոյն է թէ կայսերին է  
պատւում, իսկ ընդհակառակը պատկերին  
անպատւողը՝ միւնոյն է թէ անպատւում  
է կայսեր: Եթէ մահկանացու կայսըներին  
պատւում ենք, որ նորանք մեզ խաղաղու-  
թեան մէջ են պահպանում, ապա որքան  
թանկ պիտի լինի այն պատուասիրու-  
թիւնը տալ այն սրբերին, որոնք նահա-  
տակուել են հաւատի համար, Ս. Գիրքը  
քարոզելուն համար: Երանելի Պօղոս սըր-  
բազան առաքեալը ալդ եկեղեցիներին  
յորդոր է կարդու՞մ, չը մուանալ իրենց  
առաջնորդներին. «Յիշեցէք ձեր առաջ-  
նորդներին, որոնք Աստուծոյ բանը քա-  
րոզեցին ձեզ, նայեցէք նորանց վարմունքի  
վախճանին և հաւատին նման կացէք»  
Եթ. ԺՓ. 7»:

Պօղոս առաքեալը ժողովրդին յիշեց-

նում է իրենց առաջնորդներին չը մոռա-  
նալ, ալդ մի խրատ է:  
Երկու ծանօթ ընկերներ իրենց ըն-  
կերսիրութեան կապը իրար մէջ անմո-  
ռաց պահելու համար, իրենց լուսանկար-  
ները իրար են ընծայում, իրար չը մո-  
ռանալու: Պատկերները միշտ անմոռաց  
են պահում իրենց սկզբնատպին: Եթէ մի  
հասարակ լուսանկար անմոռաց պիտի պա-  
հէ իւր իսկականին, ապա որքան անմո-  
ռաց պիտի պահէ այն իւղանկար սրբէ  
պատկերը, որ կախած ունինք մեր եկե-  
ղեցիներում, չէ որ մենք աւելի անմոռաց  
պիտի պահենք այն սրբերին, որոնք նա-  
հատակուած են հաւատի և ճշմարտու-  
թեան համար:

Ս. Գրքի մէջ գրուած Աստուծոյ  
տասն պատգամներից առաջինն է. «Բայց  
ինձանից դու ուրիշ աստուածներ չունե-  
նաս: Քեզ համար կուռք չը շինես ամեն

բանի նմանութիւնով, ինչ որ վերև երկնքումն է և ներքեւ երկրի վերայ և երկրի ներքեւ ջրերի մէջ, նորանց երկրպագութիւն չը տաս և չը պաշտես նորանց, որովհետեւ ես եմ քո Տէր Աստուածը, նախանձոտ Աստուած....» Ելից Ի. 3, 4 և 5:  
Դարձեալ նոյն բովանդակութեամբ գրուած է. «Ուրիշ աստուածներ չունենաս իմ աչքի առաջ: Քեզ համար դրոշմուած բան չը շինես և ոչ այն ամենի նմանութեամբ, որ վերև երկնքումն է և ներքեւ երկրի վերայ և երկրի տակ ջրերումը: Նորանց երկրպագութիւն չը տաս և նորանց չը պաշտես, որովհետեւ ես եմ քո Տէր Աստուածը, նախանձոտ Աստուած...» Բ. օրինաց Ե. 7, 8 և 9: «Ես եմ ձեր Տէր Աստուածը, չը շինէք ձեզ համար ձեռագործներ կամ դրոշմուածներ և ձեզ համար արձաններ չը կանգնեցնէք... Ղետաց. ԻԶ. 1»:  
Ճշմարիտ է, որ Աստուած արգելել է

Աստուածներ չը ստեղծել ձուլաձոլ պատկերներից կամ ձեռագործներից և նորանց չը պաշտել, երկրպագութիւն չը տալ, ինչպէս որ մի ժամանակ հրէից ժողովուրդն արաւ, որ երբ Մովսէս մարգարէն հեռացաւ նորանցից և ուշացաւ, նորանք մոռացան Աստուծոյ ամենակարող զօրութիւնը, որ իրենց ազատեց Փարաւոնի բռնակալութիւնից և գնացին Ահարոնի մօտ և խնդրեցին, որ իրենց համար աստուածներ շինէ, ու նորանց պաշտեն և իրենց առաջնորդեն. «Ժողովուրդը հաւաքուեց Ահարոնի մօտ և տսում է. Եկ և մեզ համար աստուածներ շինիք, մեզ առաջնորդեն» Ելից ԼԲ. 1: Ահարոնը ընդդիմացաւ և յորդորներ կարգաց, ապօրինի բան չանել, բայց ժողովուրդը կատաղեց և ստիպեց անպատճառ աստուածներ շինել: Ահարոնը ակամայ ժողովել տուեց նորանց կանանց զարդերը, ոսկեղէնները և մի ոսկի

Հորթ ձուլեց: Ժողովուրդը սկսեց նորան Աստուծոյ տեղ պաշտել: Դաւիթ մարգարէն այդ ժողովրդի մոլութիւնը յիշելով իւր սաղմոսում գրում է. «Քորէբում հորթ շինեցին և պատկերին երկրպագութիւն տուին և Աստուծոյ փառքը փոխեցին խոտակիր հորթի նմանութեան, մոռացան իրենց կենարար Աստուածը, որ Եգիպտոսում մեծամեծ գործեր արաւ և իւր հրաշքները Քամի երկրում և իւր ահաւոր բաները կարմիր ծովի վերայ» Սաղմ. ձԵ. 19, 20, 21 և 22»:

Այսպիսի մի աններելի լանցանք դործեց և Խորակելացւոց Յերոբովամ թագաւորը, որ երկու ոսկեձոյլ երինջներ շինեց և նորանց Աստուած կոչեց ասելով իւր ժողովրդին. «Ահա Խորակել քո աստուածները, որոնք քեզ հանեցին Եգիպտացւոց երկրից» Գ. թագ. ՖԲ. 28: Պօղոս առաքեալը այդ բաների համար նախա-

տում է. «Անեղծ Աստուծոյ փառքը փոխեցին պատկերի նմանութեան՝ եղանելի մարդու և՝ թուշունների և՝ չորքոտանիների և՝ սողունների..., որոնք Աստուծոյ ճշմարտութիւնը փոխեցին ստութեան, հնագանդեցին և պաշտեցին արարածներին և ոչ Արարչին» Հռոմ. Ա. 23 և 25:

Աստուածալին տնօրինութիւնների և սրբերի նկարագրութիւնը և պատկերացնելը յանցանք չէ, այլ յանցանք և կռապաշտութիւնն այն է, որ Աստուծոյ մեծութիւնը և ամենակարող զօրութիւնը ուրանալով կամ չը ճանաչելով՝ նիւթական բաներին Աստուծոյ տեղ են պաշտում: Ահա այդպիսի բաների համար է Աստուածարգելում և կռապաշտութիւն համարում, բայց երբ ձեռագործ պատկերները, ճարտարապետութիւնները և ձուլաձոյ պատկերները ցոյց են տալիս Աստուածալին մեծութիւնը, բարութիւնը և ողորմու-

թիւնը կամ սրբի դէմքը, նայուածքը,  
որոնցով ներգործութիւն են անում մարդ-  
կալին մտքի և հոգու վերայ և բարո-  
յապէս օժտում, Աստուած դորանց չէ  
արգելում, այլ և հրամայում է շինել պատ-  
կերներ և դնել 'ի ցոյց ժողովրդին:

Եւ Աստուած ասաց Մովսէս մար-  
դարէին.

«Անփուտ փայտից կը շինես վկայու-  
թեան տապանակ, նորա երկարութիւնը  
երկու և կէս կանգուն լինի, լալնութիւնը  
մէկ և կէս կանգուն և բարձրութիւնը  
մէկ և կէս և նորան սուրբ ոսկով կը-  
պատես, ներսից և դրսից կօծես նորան,  
և նորա շրջանակի չորս կողմով ոսկեայ  
ծնոտներ կը շինես... Եւ կը շինես երկու-  
ճախարակեայ ոսկեայ Քերովբէներ և նո-  
րանց քաւութեան երկու կողմերի վերայ կը  
դնես և Քերովբէները լինին մէկը քա-  
ւութեան մի կողմին, իսկ միւսը յետեեալ

կողմին: Եւ կը շինես երկու Քերովբէներ  
նորանց երկու կողմերին և Քերովբէների  
թևերը տարածուած լինին վերևից և  
թևերով հովանաւորեն քաւութեան և  
նորանց երեսները իրար յանդիման լինի,  
որովհետեւ քաւութիւնը պիտի տապանա-  
կի վերևի կողմից լինի:» Ելից, ԻԵ. 10,  
11, 18, 19, 20 և 21:

Զեռքով շինուած տապանակ ուխ-  
տին ոչ թէ միայն Աստուծոյ ամենակա-  
րող զօրութիւնն էր լիշեցնում ժողովր-  
դին, այլ և ձուլաձոյ Քերովբէներն կոա-  
պաշտ մարդկանց յայտնի էին անում Աս-  
տուծոյ զօրութիւնն ու մեծութիւնը:  
Սուրբ Գիրքը յետեեալն է պատմում. «Եւ  
ժողովուրդն ուղարկեց Սելով, և այնտեղից  
վեր առին Տիրոջ զօրութեան ուխտի տա-  
պանակը, որի վերայ նստած էին Քերով-  
բէները և Հեղիալի երկու որդիքն Ոփնին  
և Փենեհէսը գնացին Աստուծոյ տապա-

նակ ուխտիի հետ։ Եւ եղև, երբ Տիրոջ ուխտի տապանակը եկաւ բանակը, ամենայն Խորայէլը մեծ ձայնով աղաղակեց և երկիրն էլ հնչեց։ Եւ ալլազգիները լսեցին աղաղակը և ասում են. ի՞նչ է այն աղաղակի ձայնը Երբայեցիների բանակում և իմացան, որ Տիրոջ տապանակը եկել է բանակը։ Եւ ալլազգիները վախեցին և ասում են, այն նորանց աստուածներն են եկան բանակը, Տէր, մեզ ապրեցրու. վայ մեզ, որովհետև մինչև այսօր այսպիսի բան չէր պատահել։ Վայ մեզ՝ ո՞վ պիտի մեզ ազատի նորանց հզօր աստուածների ձեռից, այն աստուածներն են, որ ամենայն հարուածներով Եգիպտացիներին զարկեցին և բոլոր անապատին։ Ա. թագաւոր. Պ. 4, 5, 6, 7 և 8։

Դագոնայ մեծ կուռքի պատկերը, որ Ա.զովտացի կռապաշտները պաշտում էին, Աստուած տապանակ ուխտիի միջոցաւ կոր-

ժանեց նորան և Ա. Գիրքը դորա համար այսպէս է գրում. «Եւ Փղշտացիներն Աստուածոյ տապանակ ուխտին տարան Դագոնայ տունը և դրին Դագոնի մօտ։ Եւ յետեեալ օրն առաւօտեան կանուխ Ա.զովտացիները մտին Դագոնայ տունը և տեսան Դագոնը իւր երեսի վերայ կործանուած Ա.ստուածոյ տապանակ ուխտիի առաջ գետնի վերայ և նորանք Դագոնը վեր առին և տեղը դրին։ Եւ յետեեալ օրն առաւօտեան կանուխ վեր կացան և ահա Դագոնը կործանուած էր իւր երեսի վերայ, Տիրոջ տապանակ ուխտիի առաջ գետնի վերայ։ Ա. թագ. Ե. 2, 3 և 4։ Ա.յստեղ շատ պարզ է, որ երկուսն էլ ձուլածոյ և ձեռքով շինուած պատկերներն էին, մեկը Դագոնայ կուռքը, իսկ միւսը տապանակ ուխտին իւր ձուլածոյ Քերովքէներով զարդարուած։ Ի՞նչու համար երկուսն էլ միենալոյն զօրութիւնը չունէին, ի՞նչու երկուսն էլ միենալոյն ոյժը չէին

կարողանում գործ դնել, որովհետև տապանակ ուխտին Աստուծոյ հրամանով էր շինուած և սուրբ իւղով օծուած լինելով՝ կարողանում էր կենդանի ոյժ գործ դնել, իսկ Դագոն անկարող էր այդ անելու, պատճառ որ մարդիկ նորան պաշտում էին միմիայն Աստուծոյ տեղ և Աստուած չէին ճանաչում։ Պօղոս առաքեալը Քերովբէներին գովելով ասում է. «Եւ նորա փառաց Քերովբէները, որոնք հովանի են անում քաւութեան վերայ» Եբրայ. Թ. 5: Պօղոս առաքեալը գովում է Քերովբէների պատկերները նորա համար, որ նորանք անձայն քարոզում էին Աստուծոյ Մեծութիւնը, զօրութիւնը և փառքը։

Աստուած Մովսէս մարդարէին ասել է. «Քեզ համար կուռք չը շինես, ամեն բանի նմանութիւնով» Ելից Ի. 4, իսկ յետոյ թէ. «Երկու Քերովբեալ ոսկեալ ճախարակներ կը շինես» Ելից Ի. 18: Այս-

տեղից դուրս է գալիս իրար հակասող երկու բան. «Զը շինես և շինես» խօսքերը, բայց եթէ ուշադրութեամբ քննենք և մտածենք, կը տեսնենք, որ Աստուծոյ առաջին հրամանով արգելում է Աստուծոյ տեղ երկրպագելու համար կուռքեր շինելը, իսկ երկրորդ հրամանով պատուիրում է ոսկուց ձուլել Քերովբէների պատկերները, ինչպէս վերև տեսանք։

(680 - 93)

Յակովը նահապետը գնում էր Միջագետք, արեւ մայր է մտնում, Յակովը ճանապարհին քնում է և բարձի փոխարէն իւր գլխի տակ դնում է մի քար։ Գիշերը երազ է տեսնում և այլն... «Եւ առաւօտեան Յակովը վեր է կենում և առնում այն քարը, որ գրել էր իւր գլխի տակ, արձան կանգնեցնում և նրա գլուխը իւղով օծում, և Յակովը ուխտ է գնում և ասում. «Եթէ Տէր Աստուածը ինձ հետ լինի, ինձ այս ճանապարհում պահի, որ ես գնում



եմ և ինձ ուտելու հաց և հագնելու հանդերձ տալ և խաղաղութեամբ դառնամ իմ հօր տունը և իմ Տէր Աստուածս լինի: Եւ այս քարը, որ ես արձան կանգնեցրի, Աստուածոյ տուն լինի և այն ամենից, որ ինձ տաս քեզ տասանորդ տամ»: Յակովը նահապետը ջերմն զգացմունքից քարը արձան է կանգնեցնում և այդ բաւական չը համարելով՝ իւղով օծում է նորան: Յակովը նահապետի արարմունքն ոչ ոք կարող չէ կոապաշտութիւն համարել: Նա աստուածպաշտութեան ջերմն զգացմունքից դիմեց այդ քալին և այնտեղ Աստուածոյ տուն կոչեց և յարգանքով վերաբերուեց դէպի այն քարը:

Դարձեալ ուրիշ օրինակ. Խորայէլացիները Եգիպտոսից դուրս եկած գնում էին Քանանացւոց երկիրը. նորանք հացի և ջրի մի փոքր նեղութիւն կրելով՝ սկսեցին արտնչալ Աստուածոյ դէմ: Աստուած

նորանց կամակորութիւնը կոտըելու համար, անապատի օձերի թիւը շատացրեց, որոնք խալթում էին խորայէլացիներին և բաւական ժողովուրդ կոտորուեց: Խորայէլացիները այդ պատուհասը տեսնելով սարսափահար եղան և խնդրեցին Մովսէս մարդարէին իրենց համար աղօթել Աստուածուն: Աստուած լսեց Մովսիսի աղօթքը և հրամայեց մի օձի ձուլաձոյ պատկեր շինել և փայտեալ նշանակի վերայ գնել և օձից խալթուածներից, որոնք հաւատով նայում էին նորան, իսկոյն և եթ բժշկում էին: Նշանակում է պղնձեալ ձեռակերտ օձն էլ տապանակ ուխտիի պէս զօրութիւն ունէր և Ս. Գիրքը այսպէս է գրում. «Եւ Տէրն ասում է Մովսիսին, դու օձ շինիր և դիր նորան նշանակի վերայ և երբ մարդուն օձ խալթելու լինի, օձից խալթուած ամեն ոք, որ տեսնի նորան կապրի: Եւ Մովսէս պղնձի օձ շինեց և նորան նշանակի վերալ

գըեց և երբ օձը խայթում էր մարդուն,  
սա նայում էր պղնձի օձին և ապլում էր»  
Թւոց ԻԱ. 8 և 9:

Ընթերցնել, այժմ գու ինքո զատիր,  
միթէ Մովսէս մարդարէն չէր կարող Աս-  
տուծուն ասել թէ. Տէր, գու ինձ հրա-  
մայում ես. «Քեզ համար կուռք չը շինիս»  
իսկ յետոյ: «Երկու Քերովքեալ ոսկեալ ճա-  
խարակներ կը շինեմ», այժմ ես չեմ կա-  
րող կուռք շինել: Բայց Մովսէսը տղա-  
լամիտ չէր, նա լցուած մարդարէական հոգ-  
ւով՝ հասկանում էր այն ամենը, ինչ որ  
դուրս էր գալիս Աստուածային բերանից,  
նա մանաւանդ այն պղնձից ձուլուած պատ-  
կերի նշանակութիւնը, որ Աստուծոյ մար-  
դասիրութեան մի խորհրդաւոր նշանն էր,  
որ պիտի կատարուէր Գողգոթա սարի վե-  
րալ: Այդ բանը ինքը Քրիստոս անձամբ  
բացալաւոեց. «Եւ ինչպէս Մովսէսը անա-  
պատի օձը բարձրացրեց, այնպէս էլ պէտք

է Մարդոյ որդին բարձրանալ» Յօհ. Գ. 14:  
Ուրեմն այստեղ դժուար չէ որոշել  
կոապաշտական պատկերները եկեղեցական  
սուրբ պատկերներից: Նշանակում է մեր  
եկեղեցին, որքան սրբերի պատկերները ու-  
նի, որոնք հին և նոր օրէնքների մէջ յալտ-  
նուած են մարդկութեան, անձայն քարոզ-  
ներ են Աստուածապաշտութեան համար:

Թէ ինչպէս են նկարել Աստուծոյ  
պատկերը, քանի որ նորան ոչ ոք չի տե-  
սել, այդ պարզաբաննուում է հետեւեալ կեր-  
պով. «Աստուած Մովսէս մարդարէին ասել  
է. «Զես կարող իմ երեսը տեսնել, որով-  
հետեւ մարդ չի տեսնիլ իմ երեսը և ապ-  
րիլ» Ելից Լ.Գ. 20: Այժմ ում նմանեցրիք  
նորան, միթէ հիւսնը նորան պատկեր շէ-  
նեց, կամ ոսկերիչը ոսկով ձուլեց և նորան  
ոսկով պատեց, պատկերի նման կերպա-  
րանք տուաւ նորան:» Եսայ. Խ. 18 և 19:  
«Աստուծուն ոչ մի ժամանակ ոչ ոք

չի տեսել, միմեայն միածին որդին, որ հօր ծոցումն է, նա պատմեց» Յօհ. Ա. 18, ա. Տիմ. Զ.16, Ա. Յօհ. Պ. 12:


Ճիշտ է, որ ոչ ոք անկարող է եղել Աստուծոյ սուրբ երեսը (պատկերը) տեսնելու, բայց միածին որդին պատմեց և գրուած է. «Ամեն բան իմ հօրից ինձ տուուեց և ոչ ոք չի ճանաչում որդուն, եթէ ոչ հայրը և հօրը ոչ ոք չի ճանաչում, եթէ ոչ որդին և որդին ում ուզենալ կը յայտնի» Մատթ. ԺԱ. 27: Ուրեմն թէ և Աստուածային սուրբ դէմքը մարդկային աչքին չի երևացած, այնու ամենայնիւ ըստ ցուցման Ս. Գրքի նկարուած է նորա սուրբ պատկերը: Քրիստոս նման է իւր հօրը, ուստի հօր և որդու մէջ տարբերութիւն չը կալ և նկարելն էլ դժուար չէ: Աւետարանիչը գրում է թէ. «Հօրը ոչ ոք չէ ճանաչում, եթէ ոչ որդին և որդին ում ուզենալ կը յայտնի»

Մատթ. ԺԱ. 27: Նշանակում է, որ որդին, այսինքն Քրիստոս, Հօր մասին յայտնել է, ուրեմն դժուարութիւնները փարատում են որդու յայտնելովը և ամեն մէկը տեղեկութիւն ունի Հօր մասին: Առաջ բերենք ուրիշ օրինակներ. «Եւ Ոզիա թագաւորի մեռած տարում, Տէրը տեսի բարձրութեան և վերացած աթոռի վերայ նստած և տունը լցուած էր նորա փառքով: Եւ Սերովբէները նորա չորս կողմում կալին...: Եւ ասում եմ, վայ է ինձ ես տառապեալ մարդս ինչպէս հիացած լինիմ, որովհետեւ մարդ եմ և պիզծ շրթունք ունիմ և պղծուած շրթունքներով ժողովրդի մէջ եմ բնակւում և զօրութեանց Տէրը իմ աչքերով տեսի:» Եսայ. Զ. 1, 2 և 5: Դանիէլ Մարգարէն էլ այսպէս է գրում. «Տեսնում էի, մինչև որ աթոռները գրուեցան և Հինաւուրցը նստեց: Նորա հանդերձը ձիւնի պէս սպիտակ էին և նորա գլխի մազերը ասրի պէս. Նորա սուրբ աթոռը

իբրև կրակի բոց, նորա անիւները իբրև  
բորբոքուած (վառուած) կրակ...: Տես-  
նումէի գիշերուայ տեսիլքում և ահա եր-  
կնքի ամպերով գալիս էր Մարդոյ որ-  
դու նման և հասնում էր մինչև Հինա-  
ւուրցը և ներկայանում նորա առաջ»:  
Դանիէլի Ե. 9 և 13:

Մեր եկեղեցին Աստուծոյ յախնու-  
թիւնը Ս. Գրքից առնելով՝ նկարում է Նո-  
րա պատկերը և օծելով Սուրբ իւղով, Նորա  
առաջ մտքով վերանում է գէպի Աստուած,  
կամ գէպի սուրբը, ապա իւր սրտի փըղ-  
ձուկները արտայայտում Նորա առաջ և  
երկրպագութիւն տալիս, Դաւիթ Մարգա-  
րեի պէս ասելով. «Դէպի քեզ եմ բարձ-  
րացնում իմ տչքերը, Ով Տէր, որ երկն-  
քումն ես բնակւում» Սաղմ. Ճիբ. 1: Այ-  
սէս ենք վերաբերւում և գէպի բոլոր սըր-  
բերի պատկերները, որոնք անձայն մեզ քա-  
րոզում են Աստուածաշատութիւն, ճշմար-  
տութիւն, առաքինութիւն և ալլ շատ կրօ-  
նական վսէմ լատկութիւն ունեցող գործեր:

Վ. Ե. Ռ. Զ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0133090

